

ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

64 (66). ԳՈՐԾԱՀԱՐԻ ԽԱՉ

Մէ մարտ Եռունինն կլուիս գգըրգը: Գիկը էրտը վաճք, գըսը. - Տե՛ր հայո, ի՞նձ էնիմ, օր ըմ մեղքերին թողություն եղնի, կինամ, հոլիս դժոխք ը գէրտը: Ը-րը՝ ի՞նալ: Ըրը. - Եռունինն կլուիս իմ գըրգի: Գնայէ ըդ մարտու վրեն, գըսէ. - Է՞ս վաճքի թունդի անթարոց տիր քու թեկի վրեն, կնը, եթե ըդի գանցա՞վ, կնը կիցի, օր քու մեղքին՝ թողություն գէղնի, օր չէ՝ կնը իմացի, օր տու դժոխքի վերին քունջն իս: Ըդ մարտ լը ըդի գտոր թեկն, գէրտը: Ծադ գէրտը, քիչ գէրտը, մէ գերեզմանադան մողով կանցնի, խշփշուն գիկը, ծեն գիկը, գըսը. «Ախաբե՛ր, գայնի էրտամ իշիմ՝ ըդ ի՞նձ ծեն ը»: Գէրտը, կամաց-կամաց գմողենը՝ մէ մարտ ը. ջրիել վախտ ինձ էնիր ը ըդ հարսին, հարս ծեն չղվի իրան, ուխտիր ը, օր տու մեռնիլ լը մեռնիս՝ ըն մեռուգ վախտ յըս ոդի իկամ, ծեն իդամ քզի: Գիկը դեսնը՝ քանդիր ը գերեզման, հանի տրի գերեզմանաթումը, հանդը այլանդակություն ը գէնը: Գըսը. «Ախաբե՛ր, Եռունինն կլուիս գըրգեր իմ, Էս մէ կլուիս լը գգըրգիմ, ջայնամ, էրտամ դժոխքի վերին կլուիս»: Գքըշը գերեզմանաթմրից էս կողմ, գսպանը, օր արուն չքափի գերեզմանի մեծ, գքաղը ըդ մեռելին ու նորից գտառնը: Գանցնի էրգար ժամանագ, մեգ էլ գնայէ, չորս կողմ արև է, իրա վրեն՝ հով է, էսենց գտառնը նայը, իրա թեկ ըդ վառած փեղ՝ գանցիր է: Գտառնը ըդ տեխից իկը վաճք, գիկը վարդասետի մոդ գըսէ. - Տե՛ր իմ, ըմ թեկի, քու տված անթարոց, գանցիր է: Վարդապետ գըսէ. - Արի՝ դուզ ըսէ. տու ի՞նձ իս էնի, օր ըդի գանցիր է: Ըդ մարտ գըսը. Քզնից այլիմ, ասսուց չըմ կըոնը պըիի, յըս Եռունինն կլուիս գըրգեր իմ, ըդի լը, կնացի գերեզմանատան կողքով, ըսպես պան պաղահավ, ըսի՝ հըմին, հըմին յըս դժոխքի վերին կլուիս իմ, ըդրա կլուիս լը թռում: Վարդապետ գըսէ. - Ջըլոք առու արդար իս, օր ըդի գանցիր է: Ըդրա համար լը զկոչվի Գործալարու իսաչ, գործելին՝ հոկի ը տառժի, ըդ վառված փեղն՝ գանցիր է:

65 (67). ՈՐՍԱՇ ՆԱՁԱՐԻ ԱԱՏՎԱՋ

Է՛յ, ուստա Նաջարի աստված, տու հըսնիս ան-ձարին, նեղյալին, հիվնդներուն, եղի սաղադուն՝ պը-իս ըմ րալեք, հըսնիս ըմ մեգ ախապոր: Գինա՞ս, ըն-ծու գըսին ուստա Նաջարի աստված. ուրեմն, ուս-տա Նաջարին թակավոր գկանձէ գըսէ. - Էս մեգ

սուտկվա մեջ՝ րդի քասուն դլի պեփ իըզրիս. չէ լուս պածկվավ, չիըսցիր՝ քու վիզ կ'կորիմ: Արտեն մուտն է. ժամի դրսվերգուս գ'նի, մեգ գ'նի, էրգուս գ'նի, Նա-ջար գէրտը ու իկը. քուն ու դրտար չունէ: Կնիգ գըսէ. - Այ մարտ, արի՝ քնի, աստված մեգ ը, տուո՞ իըզրար: Գէրտը ուստա Նաջար գընի: Արտեն լուս ը. գգըրգին ուստի տուու: Ուստա Նաջար գգարթնի, չոքիր գտո-դը, գըսը. «Արտեն կնացի, ըմ վերճին օրն ը. ըմ գլուխ գ'կորե»: Գըսը. - Ի՞նձ է: Գըսին. - էլի, էլի ուստա Նա-ջար, թակավոր մեռիր է, էլի իրան դագաղ շինէ: Ըդ վերճի րորեին, աստված հըսավ իրան, ըդրը համար լը գըսին՝ ուստա Նաջարի աստված:

66 (68). ՄԵՂՐԱԿԵԴԻ ԱԶ

Մեղրակեդի ագ՝ Ասրէ գոլն էր. իօն թունդիրմ՝ կեր: Օվ ու գող թունդիր քար սըրեր՝ աճից լուս գքաղ-վեր: Զըդի էղեր ը իրիցու թունդիր. իսրողիգ կնիգմ՝ կեդին ուրին: Ամեգ հաց թիւելուն՝ գկանձեր, - Ասված, զըմ մեղաց՝ փրգություն: Օրմ՝ լէ իըդ կանճելուն՝ խուրրաթմ՝ փըդը կեդնի, ուրնը հաց կուզը: Կնիգ էր-գու լոշ կգըրգը ագիշի ծեր, կիղը ուրին: իսրորաք՝ պազմ՝ էլ գուզը: Կնիգ գշիվարի, էն լէ գկանձը. - Աս-ված, զըմ մեղաց փրգություն ու իըդ իդալուն՝ էրեց զմոդի ներս: - Կա՞հի, - կ'սէ, - զըմ էրսի արուու թափավ, ըլ յըս ընչո՞ւ կարրիմ: Կ'սէ ու կսըրէ ուրին թունդիր: Թունդիր գքշըշը, ուր դգեն ճուր կիղը, գէլի հըտը րոոււգ, ընքի լէ՝ ծուգմ՝ կեդնի, կմդի թունդրան ագ: Ըդ թունդրան ճուր՝ անմըհգան էր. կոտեկան յարեկ լէ գսախծեր, ուրնէ մեղրությի համ կիգեր: Ըդրնէ լէ ա-նուն մնաց Մեղրակեդ:

67 (69). ԴԱՎԱԹԻ ՔԱՐ

Ալվարինցի սարիր՝ մեգ քար կար, կ'սին ըդի Դավ-թի քարն ը: Քար գրծի սարից, գիկը մըմ օճիւրին: Դավիր ըդ վախտ օչխրին րեր ը կիղը, չոք կգըրգը քըրուն, օր չիկը օչխրի վրեն: Զոք գմոդի քըրու մեծ, փոս կընգնի: Զոքի տեխն՝ ընալ լէ մացեր ը:

68 (70). ԽԱՆԴՈՐԹԻ ԱԽՊՈՐ

Իմ ճոճն կրաղմեր, կըսեր. - Մենք կէրթենք Աս-սուն, օնի Դավթի րերդ կեր. ընտեխն, հյանդուր օր րերդից ուրուն քցեր էր, - կըսեր, - հա՛մ ուր մազերու տեխն կէրկեր, հա՛մ էլ ուր կրծերու տեխն՝ ախպուր էր գ'քցեր: Կըսեր. - Ըդի յըս ըմ աճկով տեսեր իմ: Շեղո լը կըսեր. - Դավիր ճաղաց կտանենք ալուր կադենք, - կըսեր, - ըդ ավերագներ, իմ աճկով տեսեր իմ:

69 (71). ՄԱՐԱՏԿՈՒԹ-ԾՈՇ *

Մարատկու ուխտ՝ վարտերին էր: Գերթեն քո՞ս ու բըրխով, դիոլ-զուռնով, յոտ ավուր ուղելիքով: Գուղեն - խմեն, մըր Սամնա բարիր գաղուցեն, ջրինդ գիսադեն, աղունիգ գթոցեն: Վայն էն էր, ըր գոարաշտ մը օտկ սըրեր հօն, Մարուտկու գուլեմ՝ ըր սիրդն էր:

70 (72). ԱՌ-ԱՌ

Թուրքագան զորք գապաշարէ Առաքելոց վանք: Վանքի էն կաղտնի մուտք գեր, Ֆիդայինիր օն գթակնվեն: Վանահայր գապայմանավորվի Ֆիդայիներու հեդ ու թուրքական գործի մէ մաս գատնէ ներս, ինք ալ հայր պանից թեխըբար: Ֆիդայիներ գճարտին ըդ զորք ուղաձիդ բես: Թուրքի Փաշեն գմդմի՝ սարսապ գվերո ուր ջան. սաղ ջանդանիր լցուր վանքի հըյաք: Վանահայր տուրս գիկը՝ մէ ծեռին խաչ, մեգելիմ՝ աղ, գըսէ. - Առ աղ, ցան դիագաց և ճաշագէ զայն: Փաշեն գթուր վանահոր գլուխ:

71 (73). ԱՅ. ԿԱՐԱԲԵԴ

Սբ. Կարաբեդ ուր թաղուր էր, օդի կնիգ ասկ չընթողի, մղնեն թե չէ՝ կծոեն. կփրփրեն, չէ՝ կնիգ ասկ է մահմտ ուրին, գլուխ կորեր ին: Կնիգմ՝ մեր կողքի գեղեն գիկա, զոռով ներս գ'մղնա, գժոի, կերթա ուրին թըլէ Մեղրակենդ:

72 (74). ԱՍԼԱՆ - ԳՇՈՐ *

Մըր սրպի անուն՝ Ասլան Գդուր ը: Ըղեխ աբրիր իմ՝ հեր, մեր ու իրանց թըկ դղեն՝ Ասլան անունով: Ըդ մինուշարի անունով կոչվիր ը՝ Ասլան - գդուր: Ըղրա համար լը, ըդ սրպին՝ բոի թըզ մում վառին:

73 (75). ԱԿՈՒՆՔ

Ակունքը յայլի տեղ ա. լուսախպուր կա, աչքացավ գբուժա: Մէ կույր մարդ գընցնա էտեխով, գլվացվի՝ աչքեր կոացվի: Ըղրա համար, մեր գեղի անուն կոնին՝ գյողյու (աչք լվացող), հիմա՝ Ակունք է:

*Մարաթուկի գմդսկ. ըստ ականստենների՝ Մարաթուկի ընդերքից լսվում էին որոսի, հրացանի կրակոցների ծայներ (Ծան. կազմողի):

*Նիգո սորան սուրպն ը (Ծան. բանասացի):